Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

# ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱՎՈՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ՀԱՄԿ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ)

ՀԱՄԽ

*Յերևան, 1929 թ.*

3ЮП5: 658.2
A I 3542

# ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱՎՈՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ՀԱՄ Կ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ)

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ՀԱՄԽ

Յերևան, 1929 թ.

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ

ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ. № 2796 Բ.

ՊԱՏՎԵՐ № 248 ՏԻՐԱԺ 5·000

# ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱՎՈՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ՀԱՄ Կ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Բոլոր կուսակցական կազմակերպություններին, կուսակցության բոլոր անդամներին.

*Կուսակցության ինդուստրացման կուրսի հաջող կիրառումը, արդյունաբերության հաջող զարգացումն առանձնապես նրա տեխնիկական ռեկոնստրուկցիայի բարդ պայմաններում կախված են արտադրության ճիշտ կազմակերպումից և նրա ճիշտ ղեկավարությունից, այսինքն՝ արտադրու-*

թյան մեջ հաստատուն կարգ և ներքին ուժեղ դիսցիպլինան ստեղծելուց։ Մինչդեռ Համ Կ (բ) Կ Կենտկոմը հարկադրված է արձանագրելու, որ չնայած արդյունաբերության զարգացման ասպարեզում ձեռք բերված մեծ նվաճումներին, մինչև այժմ մենք դեռևս անհրաժեշտ կարգ ու կանոն չենք կարողացել ստեղծել ձեռնարկությունները ղեկավարելու գործում. գործարանային կոլմակերպությունների, կառավարչի, գործարկոմի և կուսբջիջի միջև չկան հստակ և բավարար խստությամբ սահմանագծված ֆունկցիաներ և պարտավորություններ, դեռևս տեղի չեն ունենում կուսակցական և արհեստակցական կազմակերպությունների անմիջական միջամտության դեպքեր գործարանային վարչության կոոպերատիվ արտադրողական աշխատանքներին։ Տեղի չեն ունենում նաև գործարանի վարչության

կողմից միանգամայն անթույլատրելի վերաբերմունքի փաստեր դեպի կուսակցական և արհեստակցական կազմակերպությունները, յերբ բյուրոկրատաբար աչքաթող են արվում կուսբջիջների, գործարանային կոմիտեների, միանգամայն ճիշտ՝ կուսակցության դիրեկտիվների վրա հիմնված վորոշումները:

Այս պատճառով անհրաժեշտ է սահմանել կարգ՝ վորն ապահովեր արտադրության մեջ կարգը, վորն ապահովեր արտադրության մեջ գրավված յուրաքանչյուր անձնավորության՝ կառավարիչից բռնած մինչև շարքային բանվորի յենթակա լինելն ու պատասխանատվությունն իրեն հանձնարարված գործի համար, վորն իսպառ վերացներ անպատասխանատվությունը, խառնափնթոր վիճակը և փաստական անիշխանությունն արտադրության

մեջ, վորը ըղխում է մեկ մարմնի կառա-
ված միջամտությունից մեկ ուրիշի ֆունկ-
ցիաներին։ Հատկապես այս նպատակով
կուսակցությունը բազմիցս վորոշումներ է
ընդունել արտադրության ղեկավարման
գործում միանձնյա սիստեմը կիրառելու
մասին։ Առավել ևս հնարավոր է ֆաբրի-
կաների և գործարանների ղեկավարների
ձեռքում կենտրոնացնել տնտեսական կյան-
քի ղեկավարման բոլոր թելերը, այն ժա-
մանակ, յերբ բանվորների միջից մենք ար-
դեն ունենք բավականաչափ տնտեսական
աշխատավորների կադրեր, վորոնց աշխա-
տանքի վորակը բավական բարձրացել է
պրակտիկ աշխատանքների մեջ։

Ձեռնարկություններում միանձնյա
սիստեմ մացնելու դեպքում կուսակցության
դիրեկտիվների կատարումն այնպիսի պայ-
մաններում, յերբ բանվորների մասնակցու-

թյան ձևերն արտադրական աշխատանքնե-
րին բովանդակաչափ կազմակերպված են, պետք է սերտ կերպով կապվի մասսանե-
րի ստեղծագործական ակտիվության և նա-
խաձեռնության հետագա զարգացման ար-
տադրության կազմակերպման և նրա ղե-
կավարման գործում։ Հենակետը, նկատի ունենալով, որ բոլոր կուսկազմակերպու-
թյունները և կուսակցականները պարզել են իրենց սոցիալիստական արդյունաբե-
րության զարգացման այլ կարևոր նախա-
պայմաններ, անհրաժեշտ է համարում անե-
լու հետևյալ ցուցումները.

Արտադրության ղեկավարման գործը կազմակերպելիս՝ անհրաժեշտ է լինել այն հանգամանքից, որ վարչությունը (կառա-
վարիչը) անմիջականորեն պատասխանա-
տու չէ բոլոր արտադրական պատվերնե-
րի արդֆինպլանի կատարման համար։ Վար-

չությունը ղեկավարում և թե վարչական ապարատը և թե ձեռնարկության արտադրական բոլոր կազմակերպչական տեխնիկական պրոցեսները։ Բոլոր այդ գործառնական տնտեսական կարգադրությունները թե ստորադաս վարչության և թե բանվորների համար անպայման պարտադիր են, ինչպիսի դիրք էլ ունենան նրանք կուսակցական, արհեստակցական և այլ կազմակերպություններում։

Ձեռնարկության վարչությունն անմիջականորեն նշանակում է ձեռնարկության ամբողջ վարչա-տեխնիկական կազմը ընդ վորում կառավարչի և գործառնական վարչության փոխհարաբերություններում անհրաժեշտ է չեղնել ցեխային վարչությանն ավելի ինքնուրույնություն և լայն իրավունքներ տալու տեսակետից։

Ձեռնարկություններում պրոֆկազմա-

կերպությունները անմիջականորեն պաշտ-
պանելով բանվորների ամենօրյա կուլտուր-
կենցաղային պահանջները պետք է միա-
ժամանակ դառնան բանվորական մասսա-
ների արտադրական ակտիվության և ինք-
նագործունեության եռանդուն կազմակեր-
պիչները։ Գործարանները ակտիվ մաս-
նակցություն պետք է ցույց տան առանձ-
նապես արտադրական խորհրդակցություն-
ների միջոցով արտադրության, արդֆին-
պլանների և տեխնուսուցման միջոցների
հիմնական խնդիրները մշակելիս, ձեռնար-
կություններում հսկեն բանվորների նպա-
տակահարմար առաջարկների իրագործելու
վրա, բարելավման աշխատանքի կազմա-
կերպումը և այլն։

Կուսբջիջները ձեռնարկություններում
պետք է իրենց աշխատանքներով իրագոր-
ծեն ձեռնարկության հասարակական-քա-

ղաքական և տնտեսական կյանքի ղեկավարությունը, վարպետցի դրանով միաժամանակ ապահովվի կուսակցության հիմնական դիրեկտիվների կատարումը՝ չմիջամտելով վարչության օպերատիվ կարգադրություններին: Կուսբջիջները պարտավոր են վարչության ամբողջ սիստեմի մեջ նպաստել միանձնյա ղեկավարության սկզբունքի իրագործմանը: Կուսբջիջները վոչ մի դեպքում չպետք է դառնան ձեռնարկության վարչության, իսկ առավելապես անթույլատրելի յե միջամտել վարչության կարգադրություններին՝ բանվորներին ցեխերի միջև բաշխելիս: Ձեռնարկության հիմնական պաշտոնների նշանակման ժամանակ բջիջներն ու գործարկոմները քննում են այդ խնդիրը, սակայն այս կամ այն թեկնածուի հետ չհամաձայնվելու դեպքում նրանք չեն կարող կասեցնել վարչության կարգադրու-

թյունները, այլ վիճելի խնդիրները պետք և փոխադրել վերադաս կուսակցական, արհեստակցական և տնտեսական մարմինները։ Նմանապես բջիջները չպետք է փոխարինեն գործարկոմներին և վարչությանը՝ բանվորներից ստացված բողոքները և առանձին արտադրական կոնֆլիկտները քննության չենթարկելիս.

Ֆունկցիաների այդ հիմնական բաշխումը կուսակցական, արհեստակցական և վարչական մարմինների միջև վոչ միայն չի բացառում, այլ ընդհակառակը նախատեսում է սերտ կապ, փոխադարձ օգնություն և իսկական ընկերական միջավայր՝ ձեռնարկության աշխատանքների մեջ, վորտեղ չկա ընտանիական, փոխադարձաբար իրար պաշտպանելու վերաբերմունք։ Ամենասերտ փոխհարաբերություն փորձի հաղորդման համար անհրաժեշտ է արդյուն-

-պլանի մշակման և իրագործման գործում:
Կուսակցական, արհեստակցական և տնտե-
սական մարմինները պետք է բարձրացնեն
մասսաների ակտիվությունն արդֆինպլանի
մշակման և կատարման բոլոր փուլերում:
Արդֆինփլանի մշակման ժամանակ անհրա-
ժեշտ է ապահովել նրա գործնական քըն-
նությունն արտադրական խորհրդակցու-
թյուններում, ցեխային ժողովներում և
ընդհանուր գործարանային կոնֆերենցիա-
ներում՝ նպատակով ձեռնարկության բոլոր
արտադրական հնարավորությունների ի-
հայտ բերելուն: Արդֆինպլանն ընդունելուց
հետո, կուսկազմակերպությունները պար-
տավոր են ամեն կերպ նպաստել վարչու-
թյանը պլանի իրագործման համար:

Կուսակցական և արհեստակցական
կազմակերպությունները պարտավոր են
սիստեմատիկ կերպով արմատացնել բան-

վորների գիտակցության մեջ, վոր ձեռնարկության ղեկավարների կիրառած միջոցները, վորոնց նպատակն է ամրապնդել արտադրական դիսցիպլինան, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, և ռացիոնալացնել արտադրությունը, միջոցներ են, վորոնք բղխում են կուսակցության, խորհրդային իշխանության և արհմիությունների դիրեկտիվներից և նըպատակ ունեն բարելավել բանվորների վիճակը, ամրապնդել պրոլետարական դիկտատուրան։

Նպատակ ունենալով ավելի լրիվ չափերով օգտագործել բանվորական մասսաների նախաձեռնությունը, ապահովել նըրանց առաջարկների և արտադրական հանձնաժողովների վորոշումների կատարումը, ինչպես և նպատակ ունենալով ավելի ևս ուժեղացնել վարչության և բանվորական

ինքնագործունեության այդ օրգանների կապը, կենտրոնը նպատակահարմար է գտնում որպես փորձ մի քանի ձեռնարկություններում իրենց նախաձեռնության ժամանակամիջոցում արտադրական խորհրդակցությունների նախագահներին նշանակել կառավարչի օգնական՝ հատկապես արտադրական խորհրդակցությունների և հանձնաժողովների ու բանվորների առաջարկների իրագործման համար։ Այդ արդեն բնավ չպետք է նշանակի, որ ինքը ձեռնարկության կառավարիչը պատասխանատվություն չի կրում արտադրական խորհրդակցությունների այն որոշումների կատարման համար, որ վարչությունն ընդունել է կատարելու։ Կառավարիչը պարտավոր է ամեն կերպ նպաստել արտադրական խորհրդակցությունների և բարձրացնել մասսաների նախաձեռնությունը,

արտադրական խորհրդակցությունների մասնակցող բանվորների ուշադրությունը հրավիրելով ավելի կարևոր թերությունների վրա, մշակելով և խնամքով պատրաստելով արտադրական խորհրդակցությունների մացվելիք խնդիրները։

Դրա հետ միասին կուսակցության կենտկոմն առաջարկում է բոլոր կուսակազմակերպություններին, արհմիութենական ֆաբկոմներին և տնտեսական մարմիններին ավելի վճռական և ակտիվ առաջ քաշել բանվորներին վարչա-տնտեսական պաշտոններում պլանաչափ կերպով առաջ տանելով նրանց վարչության մեկ աստիճանից դեպի մյուսը, ընտրելով արտադրության գիտակցական վերաբերմունք ցույց տվող բանվորներին, որոնք առանձնապես այդ հատկությունները ցույց են տվել արտադրողական վերահսկիչ հանձնաժողովներում։

Բանի որ ձեռնարկությունների ղեկավարության խնդիրները բարձրանում են, կառավարիչները պետք է կարողանան տիրապետել վոչ միայն ընդհանուր ղեկավարման խնդիրներին, այլ և արտադրական պրոցեսների բոլոր գիտելիքներին, միաժամանակ ամրապնդելով կապը մասսաների հետ։

Կենտկոմն առաջարկում է կուսկազմակերպություններին՝ նպատակային պայմաններ ստեղծել վարչական պերսոնալի մեջ մտած ընկերների աշխատանքի համար, հնարավորություն տալ նրանց համար բարձրացնելու իրենց տեխնիկական և քաղաքական վորակը, դրանց հետ միասին անհրաժեշտ է ապահովել կառավարիչների յերկարատև աշխատանքը։ Կառավարիչների փոփոխումը կատարում են այն ժամկետները, վորոնք նշանակել են նրանց,

ընդլորում կուսբջիջներում կամ ռայկոմ-
ներում այդ խնդիրները քննելիս ռայկոմ-
ները պարտավոր են ժամանակին իրազեկ
դարձնել և իրենց ժողովին հրավիրել կա-
ռավարիչ նշանակող տնտեսական բարձրա-
գիր մարմնի ներկայացուցչին և արհմիու-
թենական բարձրագիր կազմակերպության
ներկայացուցչին։

Տնտեսավարներին ամեն կերպ ներ-
գրավելով համապատասխան կուս. մարմին-
ները, տեղական կուսկազմակերպություն-
ները պարտավոր են առավելագույն չափե-
րով թեթևացնել ձեռնարկության կառա-
վարիչների աշխատանքը։

Բացի սահմանված հերթական արձա-
կուրդից ԺՏԳԽ պետք է ձեռնարկություն-
ների կառավարիչներին տա լրացուցիչ
արձակուրդ 1 ու կեսից 2 ամիս, նրանց
թեորիական փորձը բարձրացնելու հա-
մար։

Արտադրության ռացիոնալացման աս-
պարեզում նոր փորձերի և մեթոդների կի-
րառումը պահանջում է խորապես ուսում-
նասիրել, իմանալ արտադրության պրոցես-
ները և առանձնապես լուրջ վերաբերմունք
ցույց տալ։ Այս կամ այն սխալներն ու
թերությունները հայտաբերելիս՝ անհրա-
ժեշտ է տարբերել իսկական սխալները
գիտակցաբար կատարված վնասարարու-
թյունից։ Անհրաժեշտ է բանվորների ջան-
քերն ուղղել ակտիվ և ստեղծագործական
քննադատության, սխալները վերացնելու
ուղղությամբ, վճռականորեն պայքարելու
համար դասակարգային թշնամու և ձեռ-
նարկության վնասարարների դեմ։

Տնտեսության բարձրացման հիման
վրա աճած բանվորական նախաձեռնու-
թյունը արդյունաբերության ռեկոնստրուկ-
ցիայի դժվարությունների պայմաններում

պահանջում և ավելի ևս ուժեղացնել արհեստակցական, կուսակցական և խորհրդային կազմակերպությունների ուշադրությունը դեպի գործարանային կազմակերպությունների հիմնական ստորին օղակների կյանքն ու աշխատանքը։

Հանձնարարել Կենտկոմի Կազմբյուրոյին 3 ամիս հետո սկսել ներկա որոշման կատարման սիստեմատիկ ստուգումը տեղերում, լսելով համապատասխան զեկուցումներ։

Առաջարկել տեղական կուսակցական, արհեստակցական և տնտեսական կազմակերպություններին խստորեն հսկել ՀԱՄ. Կ. (բ) Կ. Կենտկոմի նոմենկլատուրայով սահմանված ձեռնարկությունների կառավարիչների նշանակման և համաձայնեցման վերաբերյալ կարգին։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0037878

[024]

A I/3542